ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/81

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Լայն Շին» ՍՊԸ
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝
«Վայք Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Առաքելյանի,
«Լայն Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Շամիլյանի, ներկայացուցիչ՝ Ա. Մելքոնյանի,
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Վ. Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 13.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Լայն շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Դավարտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 13.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 14.09.2021թ.-ին <u>www.gnumner.am</u> կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/81 համարի ծածկագիրը:

24.09.2021թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Լայն Շին» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.09.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 25.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15548-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

24.09.2021թ.-ին, 01.10.2021թ.-ին, 08.10.2021թ.-ին և 13.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 08.10.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 13.10.2021թ.-ին:

2. **<u>«Վայք Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Վայք Գրուպ» ՍՊԸ-ն 13.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ծաղկահովիտի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01" ծածկագրով հրատապ բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վայք գրուպ» ՍՊԸ-ն:

www.gnumner.am կայքում 30.08.2021թ. հրապարակված տեղեկատվության համաձայն տեղեկանում ենք, որ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Լայն շին» ՍՊԸ-ն, որի հետ կկնքվի պայմանագիր անգործության համար սահմանված 10 օրացուցային օր հետո /այսինքն 30.08.2021 մինչև 09.09/2021թթ. ներառյալ/:

Միևնույն ժամանակ վերը նշված հայտարարության համաձայն 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դավարտ» ՍՊԸ-ն, որի հայտը նույնպես գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01" ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վայք գրուպ» ՍՊԸ-ն:

www.gnumner.am կայքում 30.08.2021թ. հրապարակված տեղեկատվության համաձայն տեղեկանում ենք, որ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Լայն

շին» ՍՊԸ-ն, որի հետ կկնքվի պայմանագիր անգործության համար սահմանված 10 օրացուցային օր հետո, իսկ նույն Ընթացակարգի շրջանակներում 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դավարտ» ՍՊԸ-ն, որի հայտը նույնպես գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Լայն շին» ՍՊԸ-ին ճանաչելով Ընթացակարգի ընտրված մասնակից՝միևնույն ժամանակ հրապարակելով պայմանագիր կնքելու մասին որոշում, իսկ այնուհետև «Դավարտ» ՍՊԸ-ին ճանաչելով 2-րդ տեղ զբաղոցնող մասնկից՝ վերջինիս հայտը բավարար գնահատելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ «Լայն շին» ՍՊԸ-ի և «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի արժեքների տոկոսային հանրագումարը՝ չի համընկնում ներկայացված հայտի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գումարի հանրագումարին:

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է վերը նշված փաստական հանգամանքը և որոշում է կայացվել «Լայն շին» ՍՊԸ-ի և «Դավարտ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար, մինչդեռ մասնակիցների հայտերը չեն համապատսխանում Հրավերի պահանջներին:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Լայն շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Դավարտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը 01.10.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Վայք գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/81 բողոքն ընդդեմ Ծաղկահովիտի համայնքապետարանի՝ "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-

21/01” ծածկագրով հրապարակ բաց մրցույթի /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի որոշումները դադարեցնելու պահանջի վերաբերյալ:

Ներկայացրած բողոքով հայտնել ենք, որ «Լայն շին» ՍՊԸ-ի և «Դավարտ» ՍՊԸ-ի հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից ոչ իրավաչորեն գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Բողոքաբերի կարծիքով «Լայն շին» ՍՊԸ-ի և «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվները չեն համապատասխանել հրավերի պահանջներին, դրանցում առկա է եղել հստակ թվաբանական սխալներ, որի պարագայում մասնակիցների հայտերը ենթակա էին մերժման:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Լայն շին» ՍՊԸ-ին և «Դավարտ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի հիման վրա տրվել է շտկման հնարավորություն (շտկելու հնարավորությունը այլևս սպառված է), որի պարագայում ներկայացրած սխալ ծավալաթերթ-նախահաշիվը հիմք էր հայտը մերժելու համար:

Ստորև ներկայացվում են «Լայն շին» ՍՊԸ-ի և «Դավարտ» ՍՊԸ-ի շտկման արդյունքում ներկայացրած ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական հաշվարկների վերլուծությունը (առանձին կցվում է նաև հաշվարկը).

Համեմատական վերլուծություն

"Լայն Շին" ՍՊԸ-ի ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը C58	Չափման միավորը	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը հազար դրամ	Ճիշտ հաշվարկի թիվը	Ճիշտ հաշվարկի տոկոսը	ՍՊԸ-ի նշած թիվը	ՍՊԸ-ի նշած տոկոսը
1	2	3	4	5	6	6		
Հողային աշխատանքներ								
1	Խրամուղու քանդում II կարգի գրունտներում էքսկավատորով	$մ^3$	3749.0	0.44	1649.56	12,023%	**1652.44**	
2	Խրամուղու քանդում III կարգի գրունտներում էքսկավատորով	$մ^3$	3450	0.55	1897.50		**1900.81**	
3	Փոսերի քանդում III կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենայունների համար	$մ^3$	10	4.26	42.60		**42.64**	
4	Խրամուղու եզրլիցք ձեռքով	$մ^3$	1980	0.96	1900.80		**1898.17**	

5	Խրամուղու եզրիցք բուլդոզերով	մ³	4360	0.07	305.20		**288.26**	**10.93%**
6	Խողովակների ավազե նստաշերտի 0.1մ պատրաստում և ծածկում 0.2մ ձեռքով	մ³	2834.0	4.13	11704.42		**11710.64**	
7	Ավելորդ գրունտի մի մասի հարթեցում տեղում բուլդոզերով	մ³	2050	0.08	164.00		**157.34**	
8	Ավելորդ գրունտի բարձում էքսկավատորով ինքնաթափ	մ³	1910.0	0.05	95.50		**98.92**	
9	Տեղափոխում 3 կմ	տն	868	1.19	1032.92		**1032.98**	
					18792.50		**10.929134%**	
			ՊԷԹ խողովակներ					
10	Չկազմատվող միացություն « պոլիէթիլեն - պողպատ» d=225/219 մմ	հատ	6.0	146.14	876.84		**876.86**	
11	ՊԷ խողովակի d-225x12.8մմ SDR-17.6 ՊԷ 100 տեղադրում խրամուղում	գմ	10553.9	11.43	120631.53		**120658.76**	
12	ՊԷ խողովակի d-225մմ մեխանիկական կտրում	հատ	1759	0.27	474.93		**482.7**	
13	ՊԷ խողովակի d-225մմ ծայրերի ուղղում	հատ	1759	0.56	985.03		**989.53**	
14	ՊԷ խողովակի d-225մմ կցվանքային զոդում	հատ	879	2.64	2321.87		**2323.53**	
15	ՊԷ խողովակի d-225մմ կցորդչային միացություն	հատ	106	40.02	4223.69		**4223.88**	**81.50%**
16	d-225մմ ՊԷ 90° անկյունակի տեղադրում (ներդիր տաքաց.)	հատ	1	47.57	47.57	73,377%	**47.57**	
17	d-225/110/225մմ ՊԷ եռաբաշխիչի տեղադրում	հատ	2	51.54	103.08		**103.07**	
18	d-225/150/225մմ ՊԷ եռաբաշխիչի տեղադրում	հատ	1	51.54	51.54		**51.54**	
19	Բացահայտիչ ժապավենի փռում	մ	10482	0.10	1048.20		**997.31**	
20	Պղնձե լարի տեղադրում 2.5մմ²	մ	10482	0.29	3039.78		**3011.88**	
21	Տարբերիչ նշանի տեղադրում	հատ	32	5.23	167.36		**167.46**	
22	Սպուգիչ խողովակի տեղադրում Ø57x3.5մմ	հատ	13	6.66	86.58		**86.58**	
23	Հսկիչ կետի տեղադրում	հատ	32	27.51	880.32		**880.41**	
24	Պողպատե պատյանի տեղադրում Ø273x6մմ	մ	78.0	28.54	2226.12		**2226.4**	
25	Սպորգետնյա պողպատե պատյանի մեկուսացում ամրանավորված	մ	78.0	9.51	741.78		**42.13**	

	մածիկային ժապավենով ժպ-250 մմ							
26	ՊԷ խողովակների փչամաքրում	մ	10553.9	0.01	105.54		**144.63**	
27	ՊԷ խողովակների փորձարկման համար ճնշման բարձրացում	մ	10553.9	0.01	105.54		**66.66**	
					138117.30		**80.324729%**	
	Մետաղական խողովակներ							
28	Բետոնե հիմքեր միաձույլ բետոնից B12.5 (M150) մետաղական հենասյունների համար	$մ^3$	10.0	48.04	480.40		**480.44**	
29	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=159x4մմ	կգ	2820	0.56	1579.20		**1575.33**	
30	Կիսախողովակների տեղադրում գազախողովակների տակ	կգ	603.92	0.56	338.20		**335.18**	
31	Պարոնիտի տեղադրում	կգ	5.0	0.95	4.75		**4.76**	
32	Մետաղական շինվածքների տեղադրում հենարանների հիմքերի համար (ամրան A-III դասի)	կգ	50.0	0.67	33.50	8.327 %	**33.7**	
33	Ձևավոր մասերի տեղադրում (արմունկ, եռաբաշխիչ, անցում, խցափակիչ)	կգ	112.0	1.59	178.08		**177.96**	**7.57%**
34	Հենասյուների և գազատարի մակերևույթների նախաներկում ԳՓ - 021 2 շերտով	$մ^2$	372	0.20	74.40		**73.74**	
35	Հենասյուների և գազատարի յուղաներկում երկու անգամ	$մ^2$	372	0.87	323.64		**324.44**	
36	Գազատարի փչամաքրում	գմ	630.0	0.06	37.80		**34.97**	
					15038.87		**8.746137 %**	
	Ընդամենը				**171948.66**	100%	100	
	Վերադիր ծախսեր	**13.3**			**0.00**			
	Ընդամենը				**171948.66**			
	Շահույթ	11%			18914.35		18908.11	
	Ընդամենը				190863.016		190800	
	ԱԱՀ	20%			38172.603		38160	
	Ընդամենը				229035.619		228960	

Վերը նշված թվաբանական վերլուծությունը վկայում է, որ «Լայն շին» ՍՊԸ-ն թույլ է տվել լուրջ թվաբանական սխալներ ողջ կատարված հաշվարկում, բացի այդ, իր ստացված թվերը չեն համապատասխանում ներկայացրած փոկոսներին:

Վերոհիշյալի պայմաններում անթույլատրելի էր բավարար գնահատել «Լայն շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Համեմատական վերլուծություն

"Դավարտ" ՍՊԸ-ի ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը С58	Չափման միավորը	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը դրամ	Ընդհանուր արժեքը, դրամ	Մասնակցի կողմից նշված տոկոս	Ճիշտ փոկոս
1	2	3	4	5	6	6	
	Հողային աշխատանքներ						
1	Խրամուղու քանդում II կարգի գրունտներում էքսկավատորով	$մ^3$	3749.0	0.85	3186.65		
2	Խրամուղու քանդում III կարգի գրունտներում էքսկավատորով	$մ^3$	3450	0.95	3277.50		
3	Փոսերի քանդում III կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենասյունների համար	$մ^3$	10	4.20	42.00		
4	Խրամուղու եզրիցք ձեռքով	$մ^3$	1980	1.65	3267.00		
5	Խրամուղու եզրիցք բուլդոզերով	$մ^3$	4360	0.42	1831.20		**12.023 %**
6	Խողովակների ավազե նստաշերտի 0.1մ պատրաստում և ծածկում 0.2մ ձեռքով	$մ^3$	2834.0	3.40	9635.60	**13,83%**	
7	Ավելորդ գրունտի մի մասի հարթեցում տեղում բուլդոզերով	$մ^3$	2050	0.42	861.00		
8	Ավելորդ գրունտի բարձում էքսկավատորով ինքնաթափ	$մ^3$	1910.0	0.42	802.20		
9	Տեղափոխում 3 կմ	տն	868	1.20	1041.60		
					23944.75		
	ՊԷԹ խողովակներ						
10	Չկազմափվող միացություն « պոլիէթիլեն - պողպատ» d=225/219 մմ	հատ	6.0	42.00	252.00		
11	ՊԷ խողովակի d-225x12.8մմ SDR-17.6 ՊԷ 100 տեղադրում խրամուղում	գմ	10553.9	10.40	109760.98		
12	ՊԷ խողովակի d-225մմ մեխանիկական կտրում	հատ	1759	0.25	439.75		
13	ՊԷ խողովակի d-225մմ ծայրերի ուղղում	հատ	1759	0.17	299.03	**74,34%**	
14	ՊԷ խողովակի d-225մմ կցվանքային զոդում	հատ	879	3.30	2902.33		**73.35 %**

15	ՊԷ խողովակի d-225մմ կցորդչային միացություն	հատ	106	37.00	3904.96		
16	d-225մմ ՊԷ 90° անկյունակի տեղադրում (ներդիր տաքաց.)	հատ	1	31.96	31.96		
17	d-225/110/225մմ ՊԷ եռաբաշխիչի տեղադրում	հատ	2	36.00	72.00		
18	d-225/150/225մմ ՊԷ եռաբաշխիչի տեղադրում	հատ	1	39.00	39.00		
19	Բացահայտիչ ժապավենի փռում	մ	10482	0.10	1048.20		
20	Պղնձե լարի տեղադրում 2.5մմ²	մ	10482	0.20	2096.40		
21	Տարբերիչ նշանի տեղադրում	հատ	32	13.20	422.40		
22	Սպուգիչ խողովակի տեղադրում Ø57x3.5մմ	հատ	13	13.60	176.80		
23	Հսկիչ կետի տեղադրում	հատ	32	46.00	1472.00		
24	Պողպատե պատյանի տեղադրում Ø273x6մմ	մ	78.0	31.60	2464.80		
25	Սպորգետնյա պողպատե պատյանի մեկուսացում ամրանավորված մածիկային ժապավենով dպ-250 մմ	մ	78.0	2.30	179.40		
26	ՊԷ խողովակների փչամաքրում	մ	10553.9	0.15	1583.09		
27	ՊԷ խողովակների փորձարկման համար ճնշման բարձրացում	մ	10553.9	0.15	1583.09		
					128728.18		
	Մետաղական խողովակներ						
28	Բետոնե հիմքեր միաձույլ բետոնից B12.5 (M150) մետաղական հենասյուների համար	մ³	10.0	29.00	290.00		
29	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=159x4մմ	կգ	2820	0.62	1748.40		
30	Կիսախողովակների տեղադրում գազախողովակների տակ	կգ	603.92	0.62	374.43		**8.327 %**
31	Պարոնիտի տեղադրում	կգ	5.0	4.55	22.75		
32	Մետաղական շինվածքների տեղադրում հենարանների հիմքերի համար (ամրան A-III դասի)	կգ	50.0	0.75	37.50	**11,82%**	
33	Ձևավոր մասերի տեղադրում (արմունկ, եռաբաշխիչ, անցում, խցափակիչ)	կգ	112.0	0.97	108.64		
34	Հենասյուների և գազատարի մակերևույթների նախաներկում ԳՓ -021 2 շերտով	մ²	372	1.20	446.40		
35	Հենասյուների և գազատարի յուղաներկում երկու անգամ	մ²	372	1.70	632.40		
36	Գազատարի փչամաքրում	գմ	630.0	0.15	94.50		
37	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø219x6մմ	մ	630	26.52	16705.71		
					20460.73		
	Ընդամենը				**173133.66**	100%	100
	Վերադիր ծախսեր	**13.3**			**23026.78**		

Ընդամենը			**196160.43**
Շահույթ	11%		21577.65
Ընդամենը			217738.079
ԱԱՀ	20%		43547.616

Վերը նշված թվաբանական վերլուծությունը վկայում է, որ «Դավարտ» ՍՊԸ-ն թույլ է տվել լուրջ թվաբանական սխալներ՝ տոկոսային հարաբերակցության հաշվարկի դեպքում, իր ստացված թվերը չեն համապատասխանում իր ներկայացրած տոկոսներին:

Վերոհիշյալի պայմաններում անթույլատրելի էր բավարար գնահատել «Դավարտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Վերոհիշյալի արդյուքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել:

Հատկանշական է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը անգամ բողոքից հետո պատշաճ չի ուսումնասիրել ծավալաթերթ-նախահաշվիները և չի հայտնաբերել առկա թվաբանական սխալները, և ներկայացրած դիրքորոշմամբ նույնպես պնդել է, որ անհամապատասխանություն առկա չէ, մինչդեռ հակառակը ակնհայտ է:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Բողոքաբերը չի մասնակցել բանակցություններին, ապա այս կապացությամբ բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Վայք գրուպ» ՍՊԸ-ն "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովից պահանջել էր «Դավարտ» ՍՊԸ-ի և «Լայն Շին» ՍՊԸ-ի հայտերը, այդ թվում նաև շտկված ծավալաթերթ-նախահաշիվները, դրանք ուսումնասիրելու և անհրաժեշտության դեպքում բողոքարկելու համար, որոնք հանձնաժողովը տրամադրել է միայն բանակցություններից հետո, ինչքով պայմանավորված Բողոքաբերը չի մասնակցել բանակցություններին:

Այս կապացությամբ գտնում ենք, որ եթե «Դավարտ» ՍՊԸ-ի և «Լայն Շին» ՍՊԸ-ի հայտերը ի սկզբանե ենթակա էին մերժման՝՝ շտկված ծավալաթերթ-նախահաշիվներում առկա թվաբանական սխալի պատճառով, ուստի նման պարագայում գտնում ենք, որ ոչ իրավաչ է եղել նաև անցկայցված բանակցությունները, քանի դրան մասնակցել են երկու այնպիսի ընկերություններ, որոնք ի սկզբանե պետք մերժվեին և համապատասխանաբար վերջիններիս մասնակցությունը բանակցություններին եղել է ոչ իրավաչափ, ուստի և բանակցությունները եղել են ոչ իրավաչափ:

Համապատասխանաբար նման պայմաններում գտնում ենք, որ ոչ իրավաչափ մասնակիցներով բանակցությունները պետք է չեղարկվեն և անցկացվեն նոր բանակցություններ:

Ելնելով վերոգրյալից՝ սույն բողոքի լրացումով ներկայացվում է նաև լրացուցիչ պահանջ, այն է՝ բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք.

Պարտավորեցնել "ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել բանակցությունների արդյունքում ընդունած բոլոր որոշումները:»:

3. <u>ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14803-2021 գրությամբ դիմել է ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.09.2021թ.-ին թիվ 216 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2021թ. սեպտեմբերի 14-ին Ձեր կողմից ներկայացված գրության՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ 21/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած բողոքի վերաբերյալ, հայտնում ենք, որ ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համյանքապետարանի կողմից 2021թ. օգոստոսի 5-ին գազաֆիկացման աշխատանքների ծեռքբերմուսն նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ձևով գնման ընթացակարգ: Ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 10 /տասը/ մասնակիցներ, որոնց մի մասի՝ այդ թվում «Դավարտ» ՍՊԸ-ի և «Լայն շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում եղել են որոշակի անճշտություններ, որի արդյունքում էլ գնահատող հանձնաժողովը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայան մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը և մասնակիցներին տրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ շտկելու հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, որոնք և

կատարվել են սահմանված ժամկետում, ինչի արդյունքում էլ հանձնաժողովը մասնակիցների հայտերը գնահատել է բավարար և անցել հաջորդ փուլ: Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ուստի հայտ ներկուսցրած բոլոր մասնակիցները 2021 թ, օգոստոսի 27-ին ժամը 10:00-ին հրավիրվե/ են մասնակցելու գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների, որին սակայն «Վայք Գրուլդ» ՍՊԸ-ն չի մասնակցել: Բանակցությունների արդյունքում էլ հանձնաաժողովը սահմանված կարգով որոշել է ընթացակուրգի ընտրված մասնակցին:

Ինչ վերաբերում է բողոքում ներկայացված «Դավարտ» ՍՊԸ-ի և «Լայն շին» ՍՊԸ-ի կողմից հուսստատված ծավալաթերթերի տոկոսային հարաբերությունների անհամապատասխանությանը, ապա դա չի համապատասխանում իրականությանը, ծավալաթերթերը ներկայացվել են սահմանված կարգով՝ ամբողջությամբ բավարարելով հրավերի պահանջներին:

Հիմք Ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք բողոքը ամբողջությամբ մերժել և հնարավորիցս սեղմ ժամկետում հնարավորություն տալ համայնքապետարանին՝ իրականացնել համայնքերի գազաֆիկացման աշխատանքները:»:

3. <u>Երրորդ անձ՝ «Լայն Շին» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լայն Շին» ՍՊԸ-ն 24.09.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 28.09.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 29.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15833-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով հրատապ բաց մրցույթի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ մասնավորապես հայտնելով հետևյալը.

«1. Պատվիրատուն թույլ է տվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության խախտում, մասնավորապես՝ հրավերով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է ՀՀ օրենսդրության պահանջներին անհամապատասխան:

Հիմնավորում՝

32. Հրավերով նախատեսվում է նաև, որ

3) շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից՝

ա. հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

2. Միաժամանակ հայտնում ենք՝

- *Գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված չէ ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ գյուղերի գազիֆիկացման աշխատանքների ձեռքբերման համար հաստատված գնումների պլանը: Խախտվել է Կարգի 16-րդ կետի պահանջները:*

Հիմնավորում՝

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

- *2021 թվականի օգոստոսի 5-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված Հրավերով ներկայացված չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը:*

Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 10-րդ կետի պահանջները:

Հիմնավորում՝

Հոդված 13. Գնման առարկայի բնութագրերը

2. Գնման առարկայի բնութագրերը՝

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

10. Սույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Վայք Գրուպ» ՍՊԸ-ն, «Լայն Շին» ՍՊԸ-ն և «Դավարտ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.08.2021թ.-ի թիվ 2 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ «Լայն շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի երկրորդ բաժնի կշիռները գնային առաջարկի նկատմամբ պահպանված չեն. Մասնավորապես՝ տվյալ բաժնի կշիռ է սահմանվել 81.5% իսկ մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում տվյալ բաժնի տոկոսային կշիռը կազմում է 69.47%:

iv. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցել մեկ աշխատանքային օրով և մասնակիցներից պահանջել ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետով սահմանված փաստաթղթերը:

v. Հանձնաժողովի 25.08.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օրվա ընթացքում) ծանուցված բոլոր մասնակիցները ներկայացրել են սկզբնական հայտով թերի ներկայացրած փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին և հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, ուստի գնահատող հանձնաժողովը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն որոշել է հրավիրել գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցություններ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լայն շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի երկրորդ բաժնի կշիռները գնային առաջարկի նկատմամբ պահպանված չեն. Մասնավորապես՝ տվյալ բաժնի կշիռ է սահմանվել 81.5% իսկ մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում տվյալ բաժնի տոկոսային կշիռը կազմում է 69.47%:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցել մեկ աշխատանքային օրով և մասնակիցներից պահանջել ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետով սահմանված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 25.08.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օրվա ընթացքում) ծանուցված բոլոր մասնակիցները ներկայացրել են սկզբնական հայտով թերի ներկայացրած փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին և հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, ուստի գնահատող հանձնաժողովը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն որոշել է հրավիրել գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցություններ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ծավալաթերթ-նախահաշիվը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ծավալաթերթ նախահաշիվը կազմված է Կարգի 32-րդ կետի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված դրույթներին անհամապատասխան. Մասնավորապես՝ առանձնացված է «շահույթը՝ 11%» և «վերադիր ծախսեր՝ 13.3%», այն դեպքում, երբ մասնակիցը, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետին համաձայն, գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Այսինքն՝ մասնակցի գնային առաջարկի արժեք բաղադրիչն իր մեջ ներառում է նաև շահույթը և վերադիր ծախսերը, որպիսի պայմաններում մասնակիցների կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների կշիռների շեղումը ավել է ստացվելու հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող ածը գալիս է այն եզրահանգման, որ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվի սխալ կազմված լինելու հանգամանքն ուղղակիորեն թույլ չի տալիս կազմել ու ներկայացնել ճիշտ փաստաթուղթ (ծավալաթերթ-նախահաշիվ), որպիսի պայմաններում մասնակցության հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերն օբյեկտիվորեն չէին կարող համապատասխանել հրավերի պայմաններին, սույն դեպքում, ըստ էության, սխալ ծավալաթեր-նախահաշվին, մասնավորապես՝ դրանում առկա կշիռներին:

Ինչպես նաև հարկ է նկատել, որ Հրավերով ներկայացված չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ընթացակարգի հրավերին կից ներկայացված սխալ ծավալաթերթ-նախահաշվով, չէր կարող հայտ ներկայացրած որևէ մասնակցի հայտ գնահատել բավարար, որպիսի պայմաններում բոլոր մասնակիցների հայտերն ենթակա էին մերժման, իսկ գնման ընթացակարգը չկայացած հայտարարման՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը, այն է՝ Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ուստի, ամբողջ վերոգրյալներով պայմանավորված, «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն առարկայազուրկ է, ըստ այդմ՝ մերժման ենթակա, իսկ գնման ընթացակարգն էլ պետք է հայտարարել չկայացած՝ սույն որոշմամբ արված դատողությունների ու վերլուծությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վայք Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/81 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**